

ԱՐՏՈՒՇ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Երոտադեմի Հայոց Պատրիարքության
ժառանգավորաց փարժարան

«ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՆԹԵՂ»-Ի ԵՒ «ԱՐԱԳԱԾԻ ՈՐՍՈՐԴ»-Ի ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իսահակյանի գրական ժառանգության մեջ իրենց առաճնահատուկ տեղն ունեն լեզենդներն ու ավանդազրույցները, որոնց մի զգալի մասը գրված է որպես արձակ բանաստեղծություններ:

Դասական գրականության մեջ գոյություն ունի ժողովրդական ստեղծագործությունների մշակման երկու մոտեցում: Առաջինը՝ ժողովրդական ստեղծագործությունը հնարավորինս անխառն ներկայացնելն է, որի բնորոշ օրինակը ժողովրդական թեմաների պուշկինյան մշակումներն են, իսկ երկրորդը Գյոթեի մոտեցումն է, որով բանահյուսական ստեղծագործությունը նորովի մեկնաբանվում էր եւ շարադրվում ժողովրդական նյութի հիման վրա: Առաջին ուղղության հետեւողը Թումանյանն էր, իսկ երկրորդինը՝ Ղազարոս Աղայանը, Ավետիք Իսահակյանը եւ մասամբ՝ Հովհաննես Հովհաննիսյանը:

Ժողովրդական ստեղծագործությունների թումանյանական մշակումներն ավելի հարազատ են բնագրին: Թումանյանի կատարած փոխադրությունները միտված են հասնելու գրառված բնագրի ժողովրդական ակունքներին, վեր հանելու նրանց էությունը: Այս նույն նպատակով բանաստեղծն աշխատում է հավատարիմ մնալ անգամ ժողովրդական ստեղծագործությունների լեզվին:

Ի տարբերություն Թումանյանի՝ Իսահակյանը ոչ թե մշակել է որեւէ ժողովրդական ստեղծագործության բնագիրը, այլ այդ ստեղծագործության թեման կամ բովանդակությունն է վերցրել եւ այն հաճախ մեկնաբանել՝ համաձայն իր աշխարհայացքի ու ժամանակի հասարակական ըմբռնումների:

Այս մոտեցմամբ են գրված Վարպետի նշանավոր լեզենդներն ու ավանդազրույցները: Իսահակյանը հստակ տարբերակում չի դրել դրանց միջև: Վերջիններիս քննությունը, սակայն, ցույց է տալիս, որ նա ավելի հակված է եղել լեզենդ անվանել թափառական սյուլթեներն ու գրական սկզբնաղբյուրներով վկայված հրաշապատումները, իսկ ավանդություններ է կոչել ավելի շատ ժողովրդական բանավոր ավանդամբ փոխանցված եւ որոշակիորեն պատմական հիմք ունեցող պատմությունները:

Լեզենդի եւ ավանդության միջև միջանկյալ դիրք գրավող ստեղծագործություն է «Արագածի որսորդը», որի համար որպես ենթավերնագիր Վարպետը փակագծում նշել է. «Ավանդություն»: Այն գրվել է 1912 թ. հունվարի 5-ին Իգմիթում:

Մինչեւ վերջերս անտիպ մնացած այս գործն առաջին անգամ տպագրվել է 2014 թ. Իսահակյանի «Երկերի լիակատար ժողովածուի» ակադեմիական հրատարակության 5-րդ հատորում¹: Թե Իսահակյանն ինչու նպատակահարմար չի գտել տպագրել գրական ավարտուն մշակման հասցված այս ստեղծագործությունը, դժվար է ասել: Ակադեմիական հրատարակության ծանոթագրությունում ասվում է, որ բնագիրը գտնվում է Իսահակյանի ֆոնդի այն տետրում, ուր «գասազրքի համար (ամենայն հավանականությամբ՝ «Դասընկերի») նյութերի ցանկն ու նյութերն են»²:

«Դասընկերը» Թիֆլիսում 1910-ական թվականներին լույս տեսնող ու արեւելահայ միջավայրում տարածված դպրոցական նյութերի ժողովածու էր, որի տարբեր տարիների հրատարակությանը իր մասնակցությունն է բերել նաեւ Իսահակյանը: Հետեւաբար, «Արագածի որսորդը» Իսահակյանը ծրագրել էր գրել «Դասընկերի» համար, այնուհետեւ նպատակահարմար չի գտել զետեղելու այս ժողովածուի մեջ, քանի որ ավանդության ընթերցումը ծանր տպավորություն է առաջ բերում, եւ ճիշտ չէր լինի այն զետեղել դպրոցականների համար նախատեսված ընթերցարանում, առավել եւս, որ Իսահակյանը այս փոքրիկ գործով համամարդկային հնչեղություն թեմա էր առաջադրում:

Թեմատիկ առումով, որպես ժողովրդական թափառիկ սյուլթե, այն «կայենական» շարքի տարբերակներից մեկն է, ուր մարդկային չարություն գեմ, որպես բարձրագույն պատիժ եւ անեծք, ընտրված է չարագործի չմահանալու, ժամանակի հարահոս ընթացքում ողջ մնալու եւ այդպես տանջվելու դատաստանը:

¹ Ա. Իսահակյան, Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հ. 5, Արձակ Լյեր, Երևան, 2014, էջ 441:

² Նույն տեղում, էջ 966:

Համընդհանուր այս թեմայի իսահակյանական գրառում-մշակումը, որքան էլ զարմանալի ու տարօրինակ է, կապվում է հայ ժողովրդի ամենանվիրական ավանդույթյուններից մեկի՝ Լուսավորչի կանթեղի պատմություն հետ: Թեմատիկ առումով թեեւ բացասական կերպով, սակայն գործողությունների զարգացման ընթացքով եւ կառուցվածքային առումով այն միանգամայն համընկնում է Արագածի գագաթին անպարան կախված կանթեղի պատմության հետ:

Մինչ Իսահակյանի ակադեմիական հրատարակություն հինգերորդ հատորի լույսընծայումը, Վարպետի ձեռագիր տետրերից մեկում ամփոփված հիշյալ ստեղծագործությունն անձանոթ է մնացել հետազոտողներին կամ, իբրեւ ոչ այնքան նշանակալից գործ, չի հիշատակվել Իսահակյանին նվիրված ուսումնասիրություններում, թեեւ ուղղակիորեն կապվում է Լուսավորչի կանթեղի մասին եղած ավանդության հետ, որն իր հերթին ընդամենը մի քանի վկայություններով է մեզ հասել: Իսահակյանի մշակած ավանդազրույցը, այնինչ, հակադարձ վերականգնման մեթոդի կիրառմամբ՝ կանթեղի պատմության տարբեր դրվագներին վերաբերող մի շարք կարեւոր լրացումներ է կատարում:

Սույն հոդվածում համառոտ վերաշարադրմամբ ներկայացնում ենք «Արագածի որսորդը», ապա ընդգծել ենք թեմատիկ-կառուցվածքային առումով «Լուսավորչի կանթեղի» պատմության հետ ունեցած ընդհանրությունները:

Մի որսորդ Արագած լեռ որսի է գնում: Տեսնելով մի եղնիկ՝ սկսում է հետապնդել: Եղնիկը, քարից քար թռչելով, հասնում է լեռան գագաթին, որից ներքեւ անդունդն է: Որսորդը ձգում է աղեղը՝ նետահարելու նրան: Եղնիկը, լեզու առնելով, խնդրում է, որ որսորդը խղճա իրեն, որովհետեւ ինքը ձագեր ունի: Որսորդը, անտարբեր մնալով նրա խոսքերին, նշան է բռնում ու նետն արձակում, որը, սակայն, եղնիկի փոխարեն չրջակա քարերին է դիպչում: Որսորդը նորից է լարում նետը: Եղնիկն այս անգամ ավելի խղճալի ձեւով է դիմում որսորդին՝ ասելով, թե մի՞թե այդքան անգույն կլինի մարդ: Այս խոսքերից քարերն են անգամ գլխաշարվում, իսկ որսորդի սիրտը քարանում է:

Եղնիկը, չցանկանալով նրա որսը դառնալ, իրեն անդունդն է նետում. «Ժայռը գլխոս ձեռները տարածում է, քնքուշիկ բռնում է եղնիկին եւ հանգիստ, ապահով իջեցնում է անդունդի հատակը, դալար հովտի մեջ կանգնեցնում. ասես թե եղնիկը կանաչ թուփից կանաչ թուփի վրա է ցատկել»³: Որսորդը, շարունակելով հետապնդել, վազում է եղնի-

³ Նույն տեղում:

կին բռնելու, սակայն սայթաքում է եւ ժայռից գլորվում: Պատկերային հակադրությամբ եղնիկին իջեցրած ժայռը «Հզոր բազուկներով ամուր բռնում է որսորդին ոտներից ու էլ բաց չի թողնում: Այն օրվանից մինչեւ այսօր որսորդը ողջ ու կենդանի մնում է ժայռից կախված գլխիվայր»:

Որպես ավանդադրույցի ավարտ եւ եզրահանգում, ասվում է, որ հնում տեսել են գլխիվայր կախված որսորդին, իսկ նոր ժամանակներում միայն Զարդար անունով մի ծեր կին է տեսել եւ պատմել այս մասին:

Իսահակյանի մշակած լեգենդում Կայենի նման տանջվող եւ գլխիվայր կախված մարդու պատմության հաջորդ կարեւոր մոտիվը եւ հարցադրումը բնության վեհության եւ մարդկային դաժանության հակադրությունն էր: Համիդյան ջարդերից մինչեւ Հայոց մեծ եղեռնն ընկած արյունոտ ժամանակաշրջանում նույն այս հարցադրումը մտատանջել է նաեւ Թումանյանին, ում լեգենդներում եւ բալլադներում մարդը, թեւեր առնելով, փոխակերպվում է եւ դիմում բնության հավիտենական տարերքին:

Թումանյանի՝ ներքին միասնություն կազմող նման ստեղծագործություններին մասին է. Զրբաշյանը գրում է. «...նրանց հերոսների երկրային կյանքը, իրականության մեջ խափանված բարձր մղումներն ու իդեալները յուրովի, մեծ մասամբ ֆանտաստիկ ձեւափոխության ճանապարհով շարունակվում են բնության մեջ, միաձուլվում են բնությանը: Այն, ինչ այդ հերոսները չեն գտնում հասարակության մեջ, ի վերջո նվաճում են բնության, նրա հավերժական գոյության ու վերանորոգման մեծ հոսանքում: Բնությունը դիտվում է իբրեւ սիրտ եւ բարության, գթության եւ մարդասիրության անսպառ աղբյուր: Այն հակադրվում է շրջապատի իրականությանը, որը սառն է ու անտարբեր, լեցուն մարդու, նրա գեղեցիկ ձգտումների նկատմամբ թշնամական ուժերով, խավարով ու նենգությամբ, սոցիալական եւ ազգային ճնշման անվերջ դրսեւորումներով»⁴:

Իսահակյանի հիշյալ երկում փոխակերպումը այլ ձեւով է կատարվում: Մարդկային գեղեցկությունների եւ առաքինությունների մարմնավորում եղնիկը չար որսորդից փրկվելու համար ապավինում է բնությանը, եւ ժայռն է մարդկային փոխակերպմամբ նրան իր ձեռքերով իջեցնում բնության անհունի՝ լեռնահատակ խոր ձորի մեջ: Նման ավարտը լիովին ստուգաբանվում է լեգենդների ու ավանդադրույցների իսահակյանական մեկնաբանությունների շրջանակում:

Գ. Հովհաննիսյանը Իսահակյանի լեգենդների մասին գրում է. «Իսահակյանի, ինչպես եւ Թումանյանի նախընտրած լեգենդները որպես կանոն չեն պատկանում այն լեգենդների շարքին, որոնց իմաստը հաճախ ժամա-

⁴ Է. Զրբաշյան, Թումանյանի ստեղծագործության պրոբլեմներ, Երևան, 1988, էջ 160:

նակը մաշում է՝ երազանքը դարձնելով իրական, ճիշտ այնպես, ինչպես սեսնք XX դարը արեց թուչող Իկարի հայտնի լեգենդի հետ»⁵:

Հետեւաբար, բանաստեղծի լեգենդները չեն վերաբերում այն թեմաներին ու երազանքներին, որոնք իրականանալու էին մարդկության մեծ գյուտերի ընթացքում: Դրանք վերաբերում են «անմար տենչանքի աշխարհում»⁶ գտնվող մարդկային ձգտումներին ու երազանքներին եւ ազգային ճակատագրով պայմանավորված մտահոգություններին:

Իսահակյանի արձակ լեգենդների մասին վարպետի թոռ Ավիկ Իսահակյանը գրում է. «Իսահակյանի պատմվածքների, լեգենդների, զրույցների եւ առակների համար կենսական անհրաժեշտ պայման է հանդիսանում երկի խոհականությունը: Նրա զարմանալի բանաստեղծական երեւակայությունը, խոսքի վարպետի տաղանդը, քնարական զգացողությունը, այս ամենն իմաստուն ձեւով գործի են դրվել հանուն բարձր մտքի նվաճման»⁷:

Ասվածը լիովին վերաբերում է նաեւ «Լուսավորչի կանթեղի» պատմության հետ մի հակադրամիասնություն կազմող «Արագածի որսորդը» ավանդազրույցի իսահակյանական մշակմանը: Նկատելի է, որ այն որոշակիորեն հեռացել է ժողովրդական բնօրինակից՝ դառնալով չար ուժի եւ անպաշտպան գեղեցիկի, ինչ-որ չափով ազգային ճակատագրի մարմնավորման մի դրսեւորում՝ միշտ բարձրին ու վեհին ձգտող հայ ժողովրդի եւ շրջակա խոլժաղուժ եւ անգութ ցեղերի հակադրությամբ:

Իսահակյանի լեգենդներում ժողովրդական ավանդությունների այսպիսի վերամեկնաբանությունների մասին Ավիկ Իսահակյանը գրում է. «Պատմական իրականությունը Իսահակյանի լեգենդներում եւ զրույցներում գտնում է իր արտահայտությունը ոչ թե ռեալիստական կամ զուտ իրական ձեւերով, այլ խոհա-ալեգորիայի միջոցով, ուր հեղինակն առաջ է բերում իր մտորումներն ու իղձերը՝ այլաբանորեն կամ սիմվոլ-հերոսների օգնությամբ»⁸:

Թե ժողովրդական բանահյուսությունը եւ տարբեր պատմություններն ինչ տեղ են գրավել Վարպետի ստեղծագործական ներաշխարհում, երեւում է նրա հետեւյալ ընդհանրացված բնորոշումից. «Ես ծնվել եմ Հայաստանի պատմական Շիրակի գավառում: Այստեղ մանկական իմ երեւա-

⁵ Գ. Հովհաննիսյան, Իսահակյանի ստեղծագործական աշխարհը, Սրբան, 1969, էջ 175:

⁶ Է. Ջրբաշյան, նշվ. աշխ., էջ 173:

⁷ Ավ. Իսահակյան, Ավուրի Իսահակյանի արձակը, Սրբան, 1975, էջ 5:

⁸ Նույն տեղում, էջ 11:

կայուլթյունը ձեռավորվեց դարերի խորքից եկող բանաստեղծական ֆոլկլորով, գուսանների ու գյուղացիների երգերով»⁹:

Այն, որ Իսահակյանը ծանոթ է եղել ոչ միայն ժողովրդական չափածո ստեղծագործությունների տարբեր ժանրերին, այլև ավանդույթյուններին եւ այլ պատմություններին, երեւում է նրա մեկ այլ վկայությունից. «Միւրեւագույն Շիրակն ինձ համար տիեզերքի կենտրոնն է եղել... Այստեղ, մեր անուշ տատիկներից լսել եմ հոգի կախարդող հեքիաթներ, մեր փորձաշատ պապիկներից՝ իմաստուն զրույցներ, խոսք, առած: Մեր թափառական աշուղներից եւ գյուղացի աղջիկներից լսել եմ մեր ժողովրդի չքնադ տաղերն ու խաղերը, մեր մելոսը՝ սրտահույզ երգերը: Մեր հնադարյան խորիմաստ ֆոլկլորը, որին ես այնքան երախտապարտ եմ»¹⁰:

Արագածի փեշերը հասնում են մինչեւ Շիրակ աշխարհը, որին վերաբերող պատմությունների մասն են կազմում նաեւ Արագածի մասին ավանդագրությունները եւ տարբեր պատմությունները, որոնք չէր կարող չիմանալ Իսահակյանը: Հայտնի է, որ բանաստեղծական առումով Արագածը կենտրոնական տեղ է գրավել նրա ստեղծագործություններում:

Իսահակյանը «Ալագյազի մանկներից» հետո թերեւս պետք է անդրադառնար «Լուսավորչի կանթեղին», առավել եւս որ Ի. դարասկզբին այս վերնագրով բանաստեղծություն են գրել Թումանյանը (1903 թ.), Հովհ. Հովհաննիսյանը (1904 թ.), իսկ տարիներ անց՝ նաեւ Վ. Թեքեյանը:

Իսահակյանը գեղարվեստական անկրկնելի պատկերներով ներկայացնելով Արագածը, թերեւս չի ցանկացել եւս մեկ անգամ առանձին անդրադառնալ Լուսավորչի կանթեղի խորհրդավոր լույսին: Փոխարենը 1912 թ. Թուրքիայից եվրոպա անցնելուց առաջ, խորապես ըմբռնելով երիտթուրքերի իրական բնույթը, մինչեւ հայկական մեծ ողբերգությունը գրել է այս լեզենդը, որը նաեւ յուրովի արձագանք էր «Լուսավորչի կանթեղին»: Այս պատմությունը թե՛ Շիրակ աշխարհի ավանդագրություններից, թե՛ հայ մատենագրության իր քաջիմացությունը ու առավել եւս Թումանյանի եւ Հովհաննիսյանի մշակումներից հետո անհնար էր, որ ծանոթ չլինեին Իսահակյանը:

Հայոց լեռնաշխարհը լուսավորող կանթեղի լույսի փոխարեն Վարպետին Հայոց մեծ ողբերգության նախօրեին թերեւս մտատանջել է նրա փեշերին տարածված ժողովրդին սպառնացող վտանգը եւ մարդկային անգթությունը: Քարից ավելի քար սիրտ ունեցողներին Իսահակյանը որպես պատիժ-զգուշացում վերապահել է Արագածի պինդ թեւերում պատժված

⁹ Ավ. Իսահակյան, Նրկերի ժողովածու, հ. 4, Նրեան, 1951, էջ 89:

¹⁰ Նույն տեղում, էջ 168:

մնալը: Հայուլթյան դահիճներին պատժելու գործողությունը, հիշենք, որ մի քանի տարի անց իր գործուն մասնակցությունն էր բերելու նաեւ Իսահակյանը՝ «Նեմեսիս» գործողության շրջանակում:

Այժմ ներկայացնենք «Լուսավորչի կանթեղի» համառոտ պատմությունը, ապա այն համեմատենք «Արագածի որսորդը» լեգենդի հետ:

«Լուսավորչի կանթեղի» պատմության առաջին սկզբնաղբյուրն է Վարդան Վարդապետի կամ Արեւելցու «Աշխարհացոյցը», որում ասվում է. «Մեծաաքանչ լեռոն Արագած, որ ի ստորոտէն մինչեւ ի կատար լերինն աւուր ու կէս ճանապարհ է եւ գլուխ նորա ի Դ (4) բաժանի, լերինք մեծամեծք եւ ի մէջ նոցա գոգ հովտածեւ հարթայատակ եւ չորեսին ծայրք լերանց հանդէպ միմեանց խաչանման: Ասեն, թէ օրհնեալ եւ օծեալ ի նշանն տէրունական շնորհաբաշխ աջովն Սուրբ Լուսաւորչին լերինքն այն ի փառս խաչելոյն Քրիստոսի: Եւ է ի մէջ հովտին քարածերպ այր մեծ. ի նմին այրի շինեալ տաճար փոքրիկ, խորան եւ կախեալ կանթեղս առանց չուանի եւ փոխանակ ջրոյ արտասուօք լցեալ եւ հրով երկնային վառեալ եւ է մինչեւ ցայսօր անշիջանելի եւ մնայ մինչեւ ի Գալուստն Քրիստոսի ի դատաստան, որ եւ բազմաց արժանաւորացն տեսեալք են եւ տեսանեն զհրաշքն զայն ի փառս Քրիստոսի»¹¹:

Ըստ Վարդան Վարդապետի՝ բազում արժանավորներ տեսել են եւ կտեսնեն կանթեղի լույսի հրաշքը ի փառս Քրիստոսի, իսկ Սաղմոսավանքի կոնդակի 1623 թ. կատարված ընդօրինակության մեջ ասվում է, որ Լուսավորչի կանթեղի լույսը տեսել է Գրիգոր վարդապետը, ով այս պատճառով Ականատես է անվանվում՝ Գրիգոր Ականատես վարդապետ¹²:

Նա հիշվում է նաեւ Ղազար Ա. Ջահկեցու (կթղ. 1737-1751 թթ.) եւ Սիմեոն Ա. Երեւանցու (կթղ. 1763-1780 թթ.) գործերում եւ Լուսավորչի կանթեղի պատմության ժողովրդական ավանդության վկայված բանավոր տարբերակներում¹³:

Գրավոր եւ բանավոր աղբյուրների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ Լուսավորչի կանթեղի ավանդության մեջ ընդգծվում են չորս գլխավոր կետեր.

ա. Լուսավորչի կանթեղը Արագածի վրա կախված է առանց պարանի:

¹¹ «Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի», աշխ. Հ. Պերպեյանի, Փարիզ, 1960, էջ 26:

¹² Լուսավորչի կանթեղի սկզբնաղբյուրների, ինչպես նաև Թոմանյանի համանուն գործի մասին տես Ա. Ղանալայան, Հայ գրականությունը և բանասիրությունը, Երևան, 1986, էջ 187-188. Է. Ջորալյան, նշվ. աշխ., էջ 188-192. Վ. Դեղրիկյան, Թոմանյանը և հայոց հոգևոր ավանդույթը, Երևան, 2010, էջ 6-35:

¹³ ՄՄ, ձեռգ. թ. 8061:

բ. Կանթեղում Լուսավորչի արցունքներն են վառվում յուզի փոխաբեն:

գ. Կանթեղը վառվելու է մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը կամ Ահեղ դատաստանը:

դ. Լուսավորչի կանթեղի լույսը տեսել են եւ կարող են տեսնել միայն արդար մարդիկ, ինչպես Գրիգոր Ականատես վարդապետը:

Այժմ Լուսավորչի կանթեղի ավանդությունը բնորոշ այս չորս հատկանիշները թեմատիկ-կառուցվածքային առումով համեմատենք Իսահակյանի «Արագածի որսորդը» լեգենդի հետ:

Նախ ասենք, որ երկու դեպքում էլ ընդգծվում է Արագածի գեղեցկությունն ու վեհությունը: Որպես գործողությունների կենտրոնատեղի նշվում է, որ Արագածի կենտրոնում՝ գագաթների ներքո, գտնվում է մի հովիտ: Այստեղ է հրաշքով ապաստան գտել եղնիկը: Նույն այս հովտում էր եւ այն մատուռը, ուր ճգնեց Ս. Գրիգորը, եւ նախ այստեղ վառվեց Արագածի գագաթին կախված կանթեղը:

Իրավիճակային համընկնամբ նույն հրաշքով Արագածի գագաթին անպարան կախված է Լուսավորչի կանթեղը, իսկ Արագածի գագաթների ներքո գտնվող անդունդի վրա լեռան քարեղեն ձեռքերում գլխավայր կախված է անգուլթ որսորդը:

Լուսավորչի կանթեղը վառվելու է մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը: Որսորդն էլ ժամանակային հոսող ընթացքում շարունակում է ողջ մնալ:

Վերջին եւ գլխավոր ընդհանրությունն այն է, որ թե՛ գլխավայր կախված որսորդին եւ թե՛ կանթեղի լույսը տեսել են շատ քջերը՝ արդարները եւ արժանավորները: Թեեւ սակավ, սակայն տեսնողներ եղել են: Երկու պատմություններն էլ ավարտվում են ականատեսների վկայակոչմամբ: «Արագածի որսորդը» լեգենդում ասվում է. «Ով որ տեսել է այս բանը, առաջ հին ժամանակները, տեսել է, հիմիկվա մարդը էլ չի տեսնում. մենակ մեր օրերում ողորմածիկ Ջարդար անան է տեսել այս, որ մի արդար ու բարի պառավ էր, ու ինքը պատմել է ինձ իրեն աչքի տեսածը»¹⁴:

Ջարդարն այստեղ բնորոշվում է արդար եւ բարի բառերով, որն ուղղակիորեն համընկնում է Ականատես վարդապետին տրված բնորոշումներին:

Ղազար Ջահկեցին եւս, գրելով Լուսավորչի կանթեղի մասին, վերջում ասում է. «Տեսանի արժանաւորաց, որպէս արժանաւոր վարդապետ ոմն,

¹⁴ Ա. Իսահակյան, Նրկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հ. 5, Արձակ կյեր, էջ 442:

որ կոչեցաւ ականատես»¹⁵: Սիմեոն Ա. Երեւանցին, նույնպես նշում է, որ կանթեղը տեսել է Գրիգոր Ականատես վարդապետը¹⁶:

Գարեգին սարկավազ Հովսեփյանը գրառել է Լուսավորչի կանթեղի՝ Ապարանի՝ իբրեւ Անպարան ստուգաբանությամբ ավանդությունը, որի վերջում որպէս ընդհանրացում ասվում է. «Այդ կանթեղը մշտավառ է եւ միայն արդարներին տեսանելի»¹⁷: Աշտարակի Տ. Սարգիս քհն. Բզնունին 1884 թ. գրված «Զվարճալի հարսանիք» գործում ասում է. «էն կանթեղը ամեն մարդ չի տեսնիլ. արդար մարդի աչքին կերեւա»¹⁸:

Քառագագաթ Արագածում իրար են միահյուսվել երկու ավանդադրույցները: Արագածն իր սառցաճեմակ բարձունքից վեր պահում է Լուսավորչի կանթեղը մշտավառ, իսկ գագաթներից ցած գլխիվայր կախվել է մարդկային առաքինությունները ոտնակոխ արած անգթությունը:

Հայոց աշխարհի հոգեւոր լույսը եւ այն անտեսողին տեսնում են միայն արդարները՝ այս մասին որպէս զգուշացում եւ պատգամ ավանդելով հաջորդ սերունդներին:

РЕЗЮМЕ

В статье рассматривается легенда “Охотник Арагаца” в контексте легенд Ав. Исаакяна. Она основана на сюжете, связанном со странствующим Каином - живом призраке, проклятом и наказанном за содеянное зло. Эта легенда напрямую связана с преданием о Лампаде Григория Просветителя, в которой отразились характерные для Лампады следующие три признака: первое - над Арагацем без веревки висит Лампада Просветителя, а под вершиной, над пропастью, в каменных руках скалы головой вниз висит злой охотник; второе - Лампада Просветителя будет светить до Второго Пришествия Христа и охотник останется жив; третье - увидеть свет Лампады Просветителя удостоились редкие праведники; столь же немногочисленны те праведники, которые видели охотника, висящего вниз головой над пропастью Арагаца. Таким образом, оба предания о висящей над Арагацем лампаде и о висящем над пропастью горы охотнике, дополняя друг друга, составляют единое целое.

¹⁵ Ղազար Զահկեցի, Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ 670:

¹⁶ Սիմեոն կթղ. Երևանցի, Ջամրո, Վաղարշապատ, 1873, էջ 288:

¹⁷ «Փշրանքներ ժողովրդական քառասունութինից», ժողովեց Գարեգին սրկ. Յովսէփեանց, Թիֆլիս, 1892, գիրք Գ., էջ 47:

¹⁸ Տէն Տրվանդ Շահագիզ, Աշտարակի պատմությունը, աշխտ. Պ. Հակոբյանի, Երևան, 1987, էջ 45:

SUMMARY

In the context of Av. Isahakyan's legends, the article analyzes the one entitled "Hunter of Aragats". It is based on a vagrant plot related to Cain, who remained alive like phantom as a punishment and curse. At the same time, this legend is directly related to the tradition of "The Illuminator's Lamp" expressing the following three characteristics peculiar to the lamp. First, the Illuminator's cordless lamp is hung over Aragats and beneath the peaks, over the abyss, and the wicked hunter is hung upside down in the stone hands of the mountain. Second, the Illuminator's lamp will burn until Christ's Second Advent and the hunter will remain alive till that time. Third, only few righteous people saw the light of the Illuminator's lamp, as well as the hunter hung upside down over the abyss of Aragats. As a conclusion, it is stated that the two traditions about the lamp over Aragats and the hunter hung upside down over the abyss supplement each other and make up a completion.

